**Հաշվետվություն**

2018թ. հունիսի 5-ից 7-ը Մոսկվայում կայացած «Համալիր անվտանգություն 2018» խորագրով անվտանգության ապահովման միջոցների 11-րդ միջազգային ցուցահանդեսի մասնակցության

1. **Անունը, ազգանունը.**

   Հրաչյա Ռոստոմյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա, 2018թ. հունիսի 5-ից 7-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   ՌԴ քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նախարարության նախաձեռնությամբ:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն «Համալիր Անվտանգություն 2018» անվտանգության ապահովման միջոցների միջազգային 11-րդ ցուցահանդեսին:

6. **Քննարկված թեմաները.**

   Հանդիպման ընթացքում քննարկվել են ՌԴ քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նախարարության հետ հետագա համագործակցության խորացման հեռանկարները և նոր ուղղությունները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Հանդիպումներ եմ ունեցել ՌԴ քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նորանշանակ նախարար Եվգենի Զինիչևի, ՌԴ էկոլոգիական, տեխնոլոգիական և միջուկային վերահսկողության դաշնային ծառայության ղեկավար Ալեքսեյ Ալյոշինի և ներկա այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Փոխգործակցության երկարաժամկետ հեռանկարում, մասնավորապես, դիտարկվել են աղետներից բնակչության պաշտպանության ոլորտում օպերատիվ տեղեկատվության և տեխնոլոգիաների փոխանակման, փրկարարների մասնագիտական վերապատրաստման և արտակարգ իրավիճակներին արձագանքման միասնական մոտեցումների վերաբերյալ խնդիրները:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել նախատեսված և գործող բոլոր ծրագրերը: Վերահաստատվել է սերտ համագործակցության պատրաստակամությունը:

10. **Գործուղվողը.**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Հրաչյա Ռոստոմյան:

11. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

28.06.2018թ.